

# ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՈՍՏՈՆԴԻՒՆ Ա. ԿՈԹՈԽՎԻԿՈՅԻ ՄԻ ԹՈԽՎՈՒՆ  
ԱՅ ՀԵԹՈԽՄ ԹԱԴԱԽՈՐԸ.

Հայոց պատմութեան հետազօտութիւնը յառաջադիմութեան ճանապարհի վրայ չէ, ոչ միայն այն պատճառով, որ գրչագրութերի միջից նորանոր աղբիւրներ չեն հանւում և չեն հրատարակում; այլ և վասն զի Հայոց պատմութեամբ պարապողները բաւականանումեն սովորաբար Մխիթարեանների գրուածքներինը կրկնելով: Դոյցա գրուածները թէ գիտութեամբ թէ անգիտութեամբ գաւաճանել են Հայոց պատմութեան աղբիւրներին և մանաւանդ ճշմարիտ գիտութեան: Այդ բոլոր հեղինակութիւններն առհասարակ չէ կարելի ուրիշ կերպ գործածել, եթէ ոչ մանրամասն հետազօտութեամբ, ըստ որում գուցէ այդպիսով օգտակար լինին: Աակայն այդ դէպքում ևս հանգամանքները չեն ներում, վասն զի այդ աշխատութեանց գրողներն երկար ու ձիգ շարադրումեն, փստահանալով որ ընթերցողը կհաւատայ իւրեանց գրուածին և պէտք չի ունենալ աղբիւրները ճանաչելու, վասնորոյ և չեն նշանակում այն տեղերն, որտեղից օգտառումեն կամ օգտուած են համարում: Հանգուցեալ Ատելիաննոս Պալասաննեանն անգամ, որ երկար ժամանակ յարմարութիւն է ունեցել մշակելու իւր պատմութիւն և Հայոց պատմութեան դէպքերի մի ընթերցանելի ամիսիումն տալու, որ իւր նպատակն է եղած, գարձեալ չէ օգտուել բուն աղբիւրներից, չէ նշանակել իւր գրքի մէջ այնոքիկ որոնցից օգտուել է, այլ միայն հետեւել

է կարապետ վ. Շահնազարեանի հայերէն ծրագրին \*), ընդնմին յենուել է սովորաբար ջամշեանի պատմութեան վրայ գրեթէ կոյրզկուրայն։ Հարկաւ ամեն ոք կասէ, որ նա ևս այնքան է կատարել, որքան կարեցել է, սակայն մեր նպատակը չէ դատապարտել անցեալներում՝ ըստ իւրեանց կարեաց գործողներին, այլ նորերի ուշագրութիւնը զարթեցնելու։ Վիեննայի Մխիթարեաններն արդէն սկսել են գիտնական ճանապարհով յառաջ գնալ և կարող ենք յուսալ որ հետզհետէ դուրս կդան իւրեանց նախորդների մժնոլորտից։ Անշուշտ կովկասի բանաւուներն եւս կմտնեն ինքնորոյնութեան մէջ և Հայոց պատմութեան բուն աղբիւրների վրայ հիմնուելով միայն, կնպաստեն դարաւոր հայ ժողովրդի ուսումնասիրութեան զարգացման։

Հայոց պատմութեան մէջ Ուուբինեանց շրջանը շատ անորոշ է մնացել և նորա մանրամասնութիւնք լիովին տակն ու վրայ։ Արարատի թերթերի մէջ գրիչ շարժելով՝ իմ նպատակս եմ գնում Հայոց պատմութեան մանաւանդ այդ շրջանի ոչ միայն զանազան հարցերն ըստ պատեհութեան հետազօտութեան առնելու, այլ և Ս. Էջմիածնի հարուստ մատենադարանում գըտնուած անտիպ աղբիւրները հրատարակութեան տալ և միջոց առաջարկել այլոց ևս պատմական հետազօտութեանց մէջ հրաձուելու։ Ամենից առաջին տեղը կարող են բռնել թղթերը կամ նամակները, զի դոքա գիտութեան մէջ ամենահաստատ աղբիւրներն են կազմում։ Ակսումեմ կոստանդին Ա. կաթուղիկոսի մի թղթով, որին հանդիպել ենք բազմաթիւ գրչագրաց մէջ։ Այդ թղթի նկատմամբ հ. Զարբանալեանը դիմագրաւումէ ասել. «Այն ժամանակներն չուվլմայ քահանայապետին ու կոստանդին կաթուղիկոսին մէջ թղթակցութիւններ կլլային. և թէպէտ աղդին մէջ շատերը կըգտնուէին որ կաթուղիկոսին առ արեմուեայս ցուցած մտերմութեանը վրայ գոհ էին, բայց գոնուեցան ոմանք

\*) Ծրագիր պատմութեան Հայաստան աշխարհին և տեսութիւն հին Հայաստանի և նրա այժմեան վիճակին վրայ։ Տփխիս ի տպարանի Գաբրիէլի Մելքոնումեանց և Համբուրձումայ Էնֆիանձեանց. 1863։

ալ որ այլ և այլ պատճառներով դէմ կըկենային, ու չէին ուշ զեր որ գործադրուի այն միաբանութեան խորհուրդը, ուսկից թէ եկեղեցւոյ և թէ ազգին մեծ ամեծ բարիքներու յօյս ունէք կոստանդին: Ասոնցմէ էր և Վարդան կամ Վարիսամ որ տեսնելով Հռովմայ Հայրապետին նուիրակին թղթերը առ Կոստանդին կաթուղիկոս, ինքիրմէ՝ իբրև ի դիմաց կաթուղիկոսին թուղթ մը գրեց առ Հեթում թագաւոր, արևմտեան եկեղեցւոյն վրայ 15 մոլորութիւններ բարդելով անզգոյշ բացատրութեամբք: Որով ազգին մէջ հետեւող չունեցաւ, մանաւանդ թէ կուսակից և Համամիտ կարծուածներն այլ հեռացան իրմէ: Հին դպրութիւն. Վենետիկ 1886. Էջ 730:

Մի գատողութիւն որ ոչ մի հիմքի վրայ չէ յենւում ինքն ինքեան ժխոսում է. վասնորոյ պէտք չկայ այդպիսի սխալների, չեմ ուզում ասել՝ ստերի դէմ ելնելու: Կոստանդին Ա.ի թուղթըն արտագրած լինելով գեռ ևս ի Պարիզ ազգային մատենագարանում գնում եմ այստեղ, Ա. Եջմիածնի գրչագրների մէջ գտնուածներից նշանաւորների հետ համեմատելուց զկնի: Ա.հաւասիկ այդ թուղթն, որ ոչ միայն լոյս է ձգում Ոռորինեանց քաղաքագիտութեան վրայ, այլ և գաւանական - սպատմական նշանակութիւն ունի Հայոց եկեղեցու Համար<sup>1)</sup>:

Թուղթ տեառն<sup>2)</sup> կոստանդեայ կաթուղիկոսին Հայոց, զոր գլուխաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապահ գղեակէն Հռոմեայէ ի մայրաքաղաքն Ախու: Պատասխանի թղթին որ ի պապէն Հռովմայ բերաւ առ թագաւորն Հեթում ի ձեռն լիկատին<sup>2)</sup> (legatus - պատուիրակ, գեսպան), որ կոչի Տիմանջ ի

1) Այս թուղթը յիրարկել է Կղէմէս Գալանոս եզուիթն իւր լատին-Հայ անուանի գրութեան մէջ «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ»: յորում և Խիստ յարձակման է ենթարկում: Գորա այդ եռահատոր գրութեան քննութիւնը շուտով լոյս կտեսնէ Լիպսիուսի «Jahrbücher für protestantische Theologie», ամսագրում:

2) Ա. Եջմիածնի մատենադարանի գրչագիր № 612 ունի «ի ձեռն ծարղիկաթին», իսկ № 544 ունի «ծագղիկաթին»:

Թուին Հայոց ՈՂԵ: Գրեցաւ ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ յարմար իրս այս:

Քրիստոսապսակեալ սուրբ թագաւորի ամենայն Հայոց Հեթմայ ի Տէր ինդալ: Յառաքեալ գրոյդքս ծանեաք զքոյին հրաման, զոր հրամայեալ էիք, քաղցր և կակղագոյն առնել պատասխանի թղթին պապուն և նրբատես առնդ տիմանչիդ որ առաքեցաւ ի պապէն, գտանել զմեզ յետ ՌՄԽԸ (1248) ամի ի գտանելոյս մերոյ ի տեառնէ, կարծեն զՀայոց եկեղեցին աղքատ ի գիտութենէ:

Եւ յայս գիրս գտաք ԺԵ սխալ և անընդունակ բան խառնեալ ընդ ճշմարիտուն. Է զօր իմանալով և ի չար կամաց են գրեալ. և է զի չեն կարացեալ տեսանել զթիւրն:

Առաջինն. գրեալ է թէ Հռովմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ և արձակելոյ. և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք: Զայս ընդէր ոչ իմացան զի յորժամ ախտացան սուրբ առաքեալքն, թէ ո իցէ ի նոցանէ մէծ: Սաստեաց տէրն և ասաց. թէ այդ հեթանոսաց և անհաւատից է բան, այլ ի ձեր միջիդ ոչ այդ լինի: Եւ արդ գորա լրեալք սուտ կամին առնել զտէրն: Եւ Յովհաննէս աւետարանիցն ասէ, թէ Տէր յետ յարութեան փշեաց յառաքեալոն և ասաց. «առէք Հոգի Սուրբ, թէ զուրուք թողուցուք զմեզս թողեալ լիցին. և եթէ զուրուք ունիցիք կալեալ լիցի»: Ապա<sup>4)</sup> ամէն առաքեալքն ունին իշխանութիւն. կապելոյ և արձակելոյ: Եւ յերկոտասան աթոռոցն զմին ետ Պետրոսի: Երեք առաքեալ յերկոտասանիցն և երեք յեօթանասնիցն ի Հայք կան. և գորա ամքարտաւան բարձրայօնութեամբ ասեն, թէ կապեմք զՀայք: Պետրոս նախ ի կեսարեա Փիլիպեան հաստատեաց եկեղեցի և ապա յԱնտիոք և յետոյ ի Հռոմ: ընդէ՞ր եղեւ Հռոմ առաջին: Թէ զՊետրոս ինքեանք ի Հռոմ սպանին, զՊետրոսի Աստուածն յերուսաղէմ խաչեցին. Երուսաղէմ ընդէ՞ր չէ հրամանատու ամենայն երկրի. զայս գորա մեզ տան ասել, թէ ոչ Պետրոսի բանն

4) Կոյն ունի այս այլ ինչ քան թէ ամենայն առաքեալքն» . . . .

յետ Քրիստոսի է մեզ. և դոցա վարքն և բանքն ի Պետրոսէ հեռի է: Եւ մեր վասն դաշանց ուխտի հարցն մերոց դոցա չար ինչ չեմք հասուցեալ<sup>1)</sup> և զսիալն ողջացուցանեմք:

Երկրորդ սխալ: Զհոգին ի Հօրէ և յՈրդւոյ ասեն. որ շփոթումն և պղտորումն առնէ մտաց լսողին և թէպէտ և ասեմք չկայ վնաս և ի գրոց ասեմք, բայց ախմարացն ցաւ տայ ի լսելն, լաւ չասելն է: Զի մի է պատճառն Հայր, միոյն ծննդեամք և միոյն ելողութեամք, և ապա պատշաճ է որ մի լինի պատճառն յատուկ և յտակ: Եւ Հոգի Որդւոյ ասի, զի Որդւովն բաշխեցաւ պարզե Հոգոյն, որպէս հայրենի բարիք:

Երրորդ սխալ երկու բնութիւն ասել զմարդ: Որ թէպէտ և է երկու. հոգի և մարմին, այլ ոչ եկեղեցին և ոչ արտարինքն են երկու բնութիւն ասել զմարդ: այլ մի բնութիւն. զի թէ առանձնանան, պակասեաց բնութիւն, զի ոչ զհոգին ասել զմարդ, և ոչ զմարմինն, զի ի մի բնութիւն կապեաց զնա Արարիչն:

Չորրորդ սխալ է այս որ ասեն թէ միշտ նոր ստեղծանին Հոգիք, ապա սուտ է Մոլսէս զի առէ, «կատարեաց Աստուած զամենայն և հանգեաւ»: Եւ Նիւսացին Գրիգոր ասէ թէ Հնգիցս բիւր մինչ զսակաւն ասացի, ամենայն աւուր մարդ ծնանի. թէ նոյնքան Հոգի ստեղծանէ Աստուած յաւուրն: Այլ թէ ասեն թէև մարմինքն նոր ստեղծանին, սուտ են, զի ի ծնողայն ծնանին մարմինքն և ոչ նոր: Եւ Հոգիք ոչ յառաջ ասին, ի ստեղծանիլ մարմնոյն և ոչ զկնի. և ոչ ի Հօրէ և ի մօրէ կատարեալ<sup>2)</sup>. այլ անձառելի է վասն նմա բան. զի պատկեր է Աստուծոյ. քանզի որ քան զկերպարան<sup>3)</sup> սկզբնատպին ունի պատկերն. ապա է պատկեր. զի թէ մեր Հոգիս գիտելի էր, և Աստուած անգիտելի, սուտ էր բանն, թէ պատկեր է Աստուծոյ Հոգին. այլ և յայլս գորա լրբին:

1) Նոյն ունի «չարին չեմք հաւասացեալ», նոյն է և № 544: Երկու դէպում ևս հասկանալի է, սակայն ես առաւել ուղղագոյն համարեցի թողնել ըստ Պարիզեան օրինակին:

2) Նոյն գրչագիրն ունի «նկարեալ» 5) Նոյն «զկերպն»:

Հինգերորդ սխալ՝ Որ զՄարիամ կին և կոյս է գրեալ. և ոչ աստուածածին. որ յայտնապէս նեստորին է այս:

Վեցերորդ սխալ և մեծ: «Եղեւ, ասէ՛, կատարեալ աստուածութիւն հաւասար Հօր»: Զի ի վերայ Աստուծոյ բանին «եղեալ» ասելն՝ Արիոսին է: Զի աստուածութիւն Որդոյն ոչ է եղելութեամբ:

Եսթներորդ սխալ: «Եղեւ, ասեն, մարդ՝ որով փոքր է քան զՀայր»: Եղեն ասի մարդկութեան: Խոկ փոքրն քան զՀայրն, մեծ վնաս է: Զի պակասն քան զՀայրն՝ չէ Աստուած: Ապա ոչ կարաց ի փառս Հօրն ածել զմարմինն, բայց (ըստ) նոցա կարծեացն ոչ աստուածացաւ:

Եւ թէպէտ և ինքն ասայ. «Հայր իմ մեծ է քան զիս», չասաց թէ ես փոքր եմ քան զՀայր. և «մեծն» պատճառին միայն է. զի նա ի Հօրէ՝ և ոչ Հայր ի նմանէ: Եւ այն առ անհաւատ հրէայսն ասացաւ, որ հակառակ կարծէին զնա Հօր: Զվարուն ի Հայր վերաբերէ և ասէ հակառակն ափառս անձին իւրոյ խրնդրէ», խոկ որ խնդրէ զփառս առաքչին իւրոյ, նա ճշմարիտ է, և ի Հօր փառաւորիլն ընքն փառաւորէր, զի Որդի էր մեծութեան նորա: Այլ որպէս գոքա յանդգնին, պակասեաց Որդի մարդեղութեամբն: Միթէ զեն եղեւ նմա. ըստ ճշմարտութեան և ըստ մեզ փարթամութիւն<sup>(1)</sup> եղեւ Որդոյ մարդեղութիւն որ և յաճախեաց փառաբանութիւն նորա և Հօր և Հոգւոյն Սրբոյ. զի որքան անմարմին էր, երկնայինքն միայն փառաւորէին զնա. խոկ մարդեղութեամբն ամենայն ազգք և լեզուք, զի մեր փրկութիւն է փառք նորա:

Ութերորդ սխալ: Երկու բնութիւն և երկու կամք Քրիստոսի ասեն, զի յառաջ զմարդն երկու բնութիւն ասացին. և արդ զՔրիստոս երկու բնութիւն ասեն, որ ըստ իւրեանց անմոռութեան երեք պարու է ասել: Եւ թէպէտ զայն տգիտութեամբ ասեն գրեալ. սակայն երկու բնութիւն ասելն, զաստուածածինն

(1) Պարիզեան գրչագիր—«Հարստութիւն», «Զեն» նոյն է թէ զեան, այսինքն վնաս. Պարիզեանն ունի Վզէն», որ սխալ է. ես գրի ըստ գրչաց մատենադարանիս:

մարդածին ցուցանել, և զսուրբ խորհուրդն մարդոյ միս և արիւն. այլ և յերրորդութիւնն մուծանե երկու ընտթիւն և երկու կամք, որ է մեծ մեղք:

Իններորդ սխալն, զօր գրեալն էր՝ թէ զարդարոն միայն եշան ի գժոխոց, և եկեղեցի գուէ թէ աւերեաց, քակեաց զգժոխսն, և ազատեաց զհոգիան: Զի թագաւորն արարածոց երթեալ ի բանդըն կալանաւոր մնացր անդ, և ում ասէ մարդարէն թէ Գարձեցին մեղաւորք անդէն՝ ի գժոխս: Եւ զինչ է գժոխքն, եթէ ոչ իշխանութիւն ստոանայի իվերայ հոգւոցն, յորմէ ընկեաց զնա տէրն: Եւ թէ ի տեղւոչ, ասեն, ոչ հակառակիմք ստկայն աւերեաց զնա տէրն, և յաւերն ոչ ոք բնակէ: Եւ թէ մնացին ոք անդ, յայտ է թէ յայնմշետէ և յաւկառեան անդ տանեն զհոգիս մեղուցելոցն դեքն. զօր մի լիցի մեզ ասել:

Ցամհերորդ սխալ, թէ ի յարութեան առաւել փառաւորեցաւ մարմինն աետոն, և յայտէ ասող բանիդ, թէ վասն վարձու չարչարանացն փառաւորեցաւ յետ յարութեան: Այլ մեք խոստովանիմք թէ ընդ յղանալ բանին յարգանդ կուսին և ի խառնիլն ընդ մարմնոյն, փառաւորեցաւ. և այլ ոչ յաւելաւ նմա փառք. զի փառք մարմնոյն՝ աստուածանայն է: Զի աստուածացաւ՝ և աստուածացեալ ծնաւ, ըստ որում աստուածածին է ծնողն. ապա այլ ինչ մնաց նմա ի փառաց:

Մետասաներրորդ, որ զմիրառութիւն յերկուս են հաստեալ. քահանայն մկրտէ և եպիսկոպոսն մեռոնէ և հոգի տայ: <sup>1)</sup> Եւ թէ այդպէս է որ քահանայն հոգի չկարէ տալ. ապա զիարդ զհացն և զդինին, մարմին և արիւն Աստուծոյ գործէ, կուելով զչոգին Սուրբ. ոչ ապաքէն մի և նոյն խորհուրդ. զախտի ծնունդն՝ անդամ Քրիստոսի և զբոյսն հողոյ՝ մարմին և արիւն Աստուծոյ

1) Հռովմէական եկեղեցում եպիսկոպոսն է միայն գրօշմ տալիս, որով համայնքներում գրեթէ ամենայն ինչ կեդրոնանումէ եպիսկոպոսների ձեռքում և համայնքն ու հոգեորականութիւնն այնպիսի մտերմական միութիւն չեն կազմում: որպէս Հայոց եկեղեցում, Այս խիստ նկատելի կլինի, երբ ուշադրութեան առնենք Հռովմէաեան եպիսկոպոսաց իշխանութիւնը զանազան եկեղեցական հարցերում:

առնելն, նոյն Հոգովին, որ զկոյսն մաքրեաց, և զՅորդանան սըրբեաց. և զիա՞րդ կարէ թողութիւն տալ խոստովանողայն քահանայն Հոգովին Սրբով:

Երկոտասաներորդ սխալ զոր մոռացեալ են յեօթն քահանայագործութենէն. զմիւռոն օրհնելն, որ է յատուկ գործ եպիսկոպոսի, զի որպէս քահանայն, քան զսարկաւագն վեհագոյն առտիճան ունի. և եպիսկոպոսն երկոքումըք գործովքն, զոր գործէ, վեհագոյն գտանի քան զքահանայն. քահանայ օրհնէ և միւռոն կատարէ երկնաւոր խորհրդովին. որով օծանին ամենայն շնորհընդունակ աշխիճանք և սպասք եկեղեցւոյ:

Երեքտասաներորդ սխալն անընդունակն բան: Որ զերրորդ և զչորրորդ և զես աւելի ամուսնութիւն օրինաւորք են գրեալ և անդասապարտք: Եւ զիա՞րդ իցէ անօրինութիւն օրինաւոր. Աստուած առաց եղիցին երկոքեանն ի մարմին մի. և Տիմանջ լիկատն ասաց. թէ հինգն և վեցն<sup>1)</sup> ի մարմին մի: 318 հայրապետքն զերկրորդն ընդ խղճանօք դնեն. և իննուսունց<sup>2)</sup> պապն Հոռմայ փռանգայ զերեքն և զչորսն և զես աւելին առանց խըդճի մտացն եթող. զոր այլ սուրբ հարքն և մեծն Աթանաս, որ հոգւովն սրբով վարէին, պնդեցին չլինել քրիստոնէից բողանոց և առանց լծոյ թողեալք. և գոքա զայդ ասեն. բանդ յայդ եկեալ է, որ ով կամի գոցա լսէ և որ ոչ նոցա, որովք Աստուած խօսէր:

Չորեքտասաներորդ սխալ ասեն մինչեւ յորն դատաստանի առնուլ զվարձու արդարոցն, որք դասին ընդ հրեշտակս, և անապաշխար մեռելոցն ի ներքոյ տանջանացն մտանել<sup>3)</sup> և չարչարիլ, զոր կոչեն բիրկաթուր: Ապա Քրիստոս յի՞նչ է գալոց ի դատաստան, երբ ի գալստեան նորա վճարեալ է ամենայն ինչ. և ի՞նչ նմանէ այս և իրաւունք. մարմնով արդարանալ կամ մեղանչել և առանց մարմնոյ փառաւորել հոգւոյն կամ տանջել: Այլ մեք

1) Կոյն գրչագիր Ա. Էջմիածնի ունի «Երեքեան ի մարմին մի»: № 544 «և երեքն ի»....

2) Կոյն — «ինն ուսոյց»: 5) Կոյն «մատնիլ»:

զնախամաքրեալսն այսպէս ասեմք, և զնախահանգչին, թէ խոստովանութեամբ կատարեալ հոգիքն, թէ արդարք թէ մեղուցեալք ի միում տեղւոջ կան, մեղուցեալք տանջին միայն վախելով և արտմութեամբ, զի գիտեն զինքեանս և արդարանան խորհրդով եկեղեցւոյ և քաւին և սրբին յիշատակօք յետնոյն և ազօթիւք և պատարագօք և համարեալ է երկիւղն և արտմութիւն նոցա տանջանք, և արդարոցն խնդութիւն յուսով առաջիկայ երանութեան, և վստահութիւն զոր ունին առ Աստուած, այն համարեալ է նոցա հանգիստ, զի իմացականն հոգւոցն է, ճանաչեն որոց արժանի են, և խնդան և արտմեն անդ ուր կանն: Այլ զկատարեալ փոխարէնն ոչ ունին, զորօրինակ թէ իցեն տասըն այր ի տան միում արգելածք, ի ժամ երեկոյին հինգն ի նոցանէ ակն ունին վաղիւն պատկի, և հինգն հատման գլխոյ, ոչ միապէս նոքա զգիշերն անցուցանեն: Այլ խնդութեան և տանջանաց վախճան գալուստն է երկրորդ և յասելն տեառն երթիցեն նոքա տանջեալք, և արդարքն պատկեալք<sup>1)</sup>): Բայց առաջեալ են և ազգ մի այլ զրո չէ ընդունած, թէ ըուն արդարքն Ար ամառ յառաջ յառնեն, քան զանապաշխար մեղուցեալսն, և այն աւելի պատիւ է նոցա:

Հնգետասաներորդ սխալ որ գրեալ են թէ այնք՝ որք ընդհեշտակս գտանեալք են և որք ի ըրկատորն, միապէս փառտուրին, և անհաւատքն և մահու չափ մեղուցեալքն ի միում տանջանս կացցեն: Եւ մէք ասեմք, թէ չափ և համար ոչ գոյզանազանութեան փառաց արդարոցն, ըստ բազմատեսակ առարինութեանցն, զոր տէրն հրամայեաց, «ի տան հօր իմոյ օթեանք

1) Քաւարանը միայն Հռովմէական եկեղեցու թողութիւն վաճառողների առանձնաշնորհումն է. ուրիշ եկեղեցիներն այդ մասին ոչինչ չգիտեն: Յաճախապատումի պարզամիտ հրատարակիչը կամեցել է ճանապարհ բանալ ընդունել տալու համար, որ իբր թէ Հայոց եկեղեցին ևս քաւարան է ունեցել, ուստի յիշումէ նկատողութեան մէջ էջ 156 Խիստ քնքոյշ կերպով՝ հոգոց «կայաններում» եղողներն «որք զպարտիս յանցանացն շվճարեցին աստ անթերի»:

բաղումեն», և Պօղոս ասէ՝ «այլ փառք արեգականն է և այլ փառք լուսնի, և աստղ քան զաստղ առաւել է փառօք» վասն զանազան հատուցմանն ասէ զայս: Կմանապէս տանջանացն է որոշումն, ոմանց հուր և խաւար. կիսոց դժոխք և կիսաց յատակ դժոխոց. և կէսք սակաւ տանջեալք, և կէսք ոչ տանջեալք, և ոչ սպակեալք, և դոքա միայն են ի ստուգել: Իսկ մահու չափ մեղք, մեք ասեմք թէ այն է՝ որ արտաքոյ օրինացն առնէ ինչ մի, և ասէ թէ այս փոքր է չապաշխարեմ: և ոչ խռոտովանի և ոչ ապաշխարէ, թուի թէ այդ ջռանգաց (լատինաց) եկեղեցականք են, որ լոյծ կենօք կան և ապաշխարութեան փոյթքնաւ ոչ առնեն: Թող երթան զիւրեանց գերանն հանեն և ապա հային ի մեզ: Եւ թէ այս բանիցս կարկատանս սկսանին յօդել, նա չպակասէ մեզ Աստուծոյ ողորմութեամբն ճշմարտութիւն՝ զոր ընդդէմ տամբ նոցա: Դուք զոր պատշաճ համարիք, հասկացուցէք ի սպատառիանոյս զիւրեանց, և զինչ այլ ասեն, դուք գրեցէք ի մեզ: Թող բերեն առ մեզ զՊեարոս առաքելոյն դաւանութիւն և զԱեղբեստրոսին և զՅուլիոսին<sup>1)</sup> և զայսպիսեաց աստուածազգեաց արանց, և առաջնորդաց զիսոստովանութիւն: Եւ թէ ընդունիմք, յԱստուծոյ առնումք զբանադրութիւն, և ի նոցունց: Ապա զդոցա արուեստակեալ աւասպելան ոչ ընդունիմք, այլ և արհամարհեմք, և չիշխեն ի վերայ մեր ամեննեին<sup>2)</sup>: Եւ թէ յայս սակս տրամիս, թէ ի դաշանց հարցն մերոց քակտիմք. նա վասն դոցա չելանեմք յաշխարհականացն սիրոյ և յաղօթելոյ վասն նոցա ոչ պակասիմք, վասն դաշանց<sup>3)</sup> հարցն մերոց սրբոց և խաղաղութիւն կալցուք ընդ Աստուծոյ և ընդ սուրբ և ընդ ամբիծ հաւատոս նորա, և ի գառնազգեցիկ գայլոցդ զգու-

1) Կոյն ունի և «զԱեղեստիանոսին»: Սեղբեստրոս գահակալել է 314—335. Յուլիոս 337—352:

2) Կոյն «և չիշխեմք ամեննեին»:

3) Այս զառանցական դաշնը ծագել է դարձնալ Հռովմայ արուեստակութեամբ (տես. Վարդանի պատմութիւնը գլ. ՀԹ.): և ապա Հայերին հաճոյ թուելով զարգացուել:

շասցուք, որ ընդ Աստուծոյ և ընդ այնպիսի թագաւորին իւշաբեանց շմորեալ կամին և ընդ մեզ շմորիլ: Թէ ընդ քեզ հաւատ հարցանեն, դու ասա, թէ ես զիմ առաջնորդացն ունիմ հաւատ և զիմ եկեղեցւոյն և նոցա պարտիմ համարս տալ և ոչ ձեզ: Ո և թ գաւառ են Հայք, են որ աւեր են և են որ ի ծառայութեան կան. թէ ի ցաւ են ընդ Հայոց, թող գան ազատեն. և խօսին ընդ Հայոց վարդապետարանսն, որ ոչ բլայթով և խարէութեամբ ուսուցանեն և ուսանին՝ որպէս գոքա, այլ ճըշմարտութեամբ և հիմամբք առաջնոցն, և ապա գան առ մեզ թէ կարեն զնոսա փոխել: Մեք պատուիրեմք, որ ոչ թողուս զճշմարտութիւնն, յօժարելով զինի բազմաց ի կորուստ երթալ. թէ ոչ թող յեսան առնեն և յլրկեն թէ որպէս խոստովանին Հայք. ողջ լեր կրկին թագաւորեալ թագաւոր աստուածասէր:

Փարիզեան մի գրչագիրն աւելսցնումէ. «Որք օգտիք ի սմանէ ծասքելով ի հոգեւոր կերակրոյս իրեւ զմեղու խորիսիս, յիշեսջիք զսուրը և զարդիւնական վարդապետն Վարդան զարարող սորս, ընդ սմին և զպատուական և զբարի մայրն կրօնաւորաց և տառապեալ աղքատաց, զոր գրեթէ Քրիստոսի, զի ինքն հրամայեաց «աղքատ էի և տեսէք զիս»: Զոր յուսամ յիւր մարդասիրութիւնն ազատել ի մեղաց, մեզ՝ և ամենայն քրիստոնէից յայնմ ահագին աւուրն և նմա վառք»:

Յիշեցի որ այս քաջագորով թուղթը լոյս է ձգում Ռուբինեանց քաղաքագիտութեան վրայ և հետաքննական է դաւանական կետերի նկատմամբ: Նախ քան առաջնի մասին խօսելու, ուշադրութեան առնենք թղթի բովանդակութիւնը: Չպէտք է բնաւ մոռանալ, որ Հռովմ սովորաբար ջանում էր իւր հակառակորդների տգիտութիւնից օգուտ քաղել, ըստ որում եթէ ոչ մի միջոցով չէր կարենում՝ իւր աշխարհակալական ձգումներին գոհացում տալ, սկսում էր դաւանական՝ նոյն իսկ սքոլաստիկական վարկպարագի հարցերով զբաղեցնել նոցա և մոլորեցնել: Մոլորեցնել հեշտ էր այսպիսի գէպքերում: զի հին՝ մանաւանդ արևելեան եկեղեցիների սուրբ հայրերը՝ խոհեմութեամբ արգեօք թէ ըստ պարագայից բերման ընաւ չեն հետախուզել անօգուտ հարցեր,

քրիստոնէական փրկութեան համար էական չեն եղած և որոնք չէին էլ կարող լինելու—այդ Հայոց եկեղեցու բախտն է եղել որի հետեւանք է նորա պարզութիւնն ու Հարազատութիւնն,—ուստի և միջին դարի եկեղեցականք, նոր զարթեցրած անմիտ հարցերի լուծումն որոնելով Հնոց գրուածներում և չգտնելով, իւրեանց տղիտութիւնը վիրաւորուած պիտի գտնէին և գլխի ոյժ տալով նորանոր դաւանական վճիռներ վերագրէին իւրեանց եկեղեցուն։ Այսպիսի մի օրինակ էր և այդ թղթի շարժառիթը։ Հռովմ ոչ թէ շատ էր մտածում Հայոց դաւանանքի վրայ կամ թէ չգիտէր թէ Հայք ինչպէս պիտի դաւանէին, այլ իւր հարցով գիմումէր դէպի լուսաւորչի խաղաղ փարախը միայն ջուր պղտորելու համար։

Առ Հեթում թուղթ առաքողն է իննոկէնտ Դ. որի թղթաբերին անուան կազրած է երեք գրչագրաց մէջ «Ճաղ» նախատական անունը։ Ամբողջ թուղթն, ինչպէս երեւումէ այդ պատասխանից եղել է լոկ դաւանական—եկեղեցական՝ լի զանազան խըն։ Գիրներով, որոնք չէին կարող Հայերից ընդունուիլ։ Այդ թուղթը Ա. Հոգու բղիման մասին չէ եղած, զի Վարդան այդ խնդրի բանակցութիւնը յիշումէ իւր պատմութեան մէջ քանի մի տարիներ յետոյ<sup>1)</sup>։ Դաւանական հարցերի կուտակումը պապի թըթի մէջ, ցոյց են տալիս որ Հռովմ ճգտումէր շշկեցնել Հայոց։ Հեթում, որքան էլ քաղաքական նպատակներ ունենար և կամենար տհաճութիւն չպատճառել այդ Փշսանին աշխարհիս այսուրիկ, այսու հանգերձ նա չէ խառնուում իւր եկեղեցու սրբազն վարդապետութեան մէջ և յանձնումէ իւր կաթուղիկոսին՝ արժանաւոր պատասխան տալու։ Տեղիք ջունինք անպատճառ պընդելու թէ այդ թուղթն ուղարկուած լինի Հռովմ չենք էլ կարող ժխտել այդ, հիմնուելով յետակայ բանակցութեան եղելութեան վրայ, զի Հռովմ գիտէր գորգի տակ խոթել իւրեան տհաճոյ պատասխաններն և անգիտանալ։ Քանի որ առ այ-

ժըմ այդ թղթի պարագաները մեզ անյայտ են, ուստի անցնենք կաթուղիկոսի պատասխանի բովանդակութեան:

Հռովմ իւր բանակցութեանց մէջ մի առանցք ունէր, որի վրայ պառյտ էր գալիս, որքան էլ հեռանար դորանից և շրջէր: Այդ առանցքն էր իւր ցնորական աշխարհակալութիւնը: Բաւական էր, որ մի երկրում նա ճանաչուէր իրեւ Քշխան աշխարհիս այսորիկ, արդէն մնացեալ հարցերը բարձաթող կանուէին և կթողնուէին ժամանակի մէջ դարբնուելու: Ահա այդ թղթի մէջ ևս այդ կէտն առաջին տեղն է բռնում: Վասնորոյ և Կոստանդին բարկացած ասումէ. «Ճէ զՊետրոս ինքեանք ի Հռովմ (?) սպանին, զՊետրոսի Աստուածն յԵրուսաղէմ իսացեցին. Երուսաղէմ ընդէ՞ր չէ հրամանատու ամենայն երկրի»: Եւ իրաւ առաջին դարերում Երուսաղէմը բարձր տեղ էր բռնում և մենք գիտենք հաստատ, որ բոլոր առաքեալները հանգանակութիւն էին անում Երուսաղէմի համար, մինչդեռ Հռովմ գեռ իւր երկունքի մէջ անկամ չէր և միայն ԷՇԻԼ հենանոտական մայրաքաղաք առաջնութիւն ուսացաւ՝ թերեւս քրիստոնէութեան մէջ հեթանոսական կեդրոն գառնալու համար: Ընթերցողին յայտնի կլինի Հռովմայ ծիծաղելի բանավարութիւնն, որով նա ճգնումէ պնդել իւր աշխարհակալական գերիշխանութիւնը, հիմնուելով գլխաւորապէս՝ «դու ես Պետրոս և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ<sup>1)</sup> խօսքերի վրայ, մոռանալով Պետրոսի խոկ խօստովանութիւնը թէ վեմը Քրիստոս ինքն է<sup>2)</sup>: Այդ խօսքերն ոչինչ չեն ասում, զի վեմը բացատրուած է ձԶ, 16.ի մէջ, սակայն եթէ այդ նպաստաւոր ևս լինէր Պետրոսի աթոռին, այդ պիտի լինէր ի նպաստ Անտիօքիայի, զի Պետրոսի ի Հռովմ չեղած լինելն արդէն ցոյց է տուել լիակատար մանրամասնութեամբ հոչակաւոր աստուածաբան ու քննաբանը, Ենայի համալսարանի պրօֆ. Վիպսիուսը<sup>3)</sup>:

1) Մատթ. Փ. 2., 18. Յոյնոււնի. «սու էյ Պետրոս, կայ էպի տառւտէ տէ պետրա օյկօդոմէսօ մու տէն էկկլեզիան».

2) 1 Պետր. բ:

3) R. Lipsius, Quellen der Petrusfrage. Kiel 1872. և Petrus nicht in Romf, Jahrbücher für protest. Theol. 1876. № 4.

ինչպէս որ աւետարանում ևս նոյն խօսքերն՝ կապելու և արձակելու՝ ասուած է և միւս առաքելոց <sup>1)</sup>), նոյնպէս և հասկանում է Ս. Կրիզոր Լուսաւորիչ՝ «առ Պետրոս բանս ի տեառնէ առ ամենայն վերակացուս սուրբս ասացաւ, որք զճշմարտութիւն իրաւունին» <sup>2)</sup>): Ասկայն այս խնդրի նկատմամբ կայ մի գեղեցիկ գըրուածք, որ և տպուած է յԵրուսաղէմ 1868. Միիթար վարդապետի Տաշրացւոյ, «Յաղագս համապատուութեան ԺԲ. առաքելոցն, ասացեալ բան ընդգէմ այնոցիկ, որ նուազ ասեն զմետասանոն» քան զՊետրոս... Ի հրամանէ թագաւորին Հայոց Հեթմոյ և ի յորդորմանէ եպիսկոպոսին կաստաղօնոյ Յակոբայ»:

Ս. Հոգու բղխման առմիւ Վարդան վճռական չէ խօսում; զի ինչպէս Յայտնի է իւր պատմութիւնից և վանական վարդապետի թղթից, Հայք այդ ժամանակ սխալուել են, կարծելով թէ Հռովմա ևս իւրեանց նման է ընդունում: մինչդեռ յայտնի էր Հռովմայ զղխաւոր աւելացումներից մէկն է filioque —թէ Ս. Հոգին բղխում է ի Հօրէ և յՈրդւոյ: Այդ չարակարծիք դաւանակի գէմ՝ կըռուեց շարունակ Յունաց եկեղեցին Փոստ պատրիարքի օրերից սկըսած թ. գարում: Այդ դաւանակն ուղղակի չորրորդութիւն է մոտցնում՝ Երրորդութեան մէջ: Ծեքել սիրողները մեկնում են ըստ հաճոյից Ս. Գրիգոր Լուսաւորչի խօսքն թէ Ս. Հոգին է «ի նոյնունց էութենէն» իբր թէ «ի Հօրէ և յՈրդւոյ». խառնում են նոյնպէս ելումն և բղխումն բառերի մոքերը. մի և նոյն ժամանակ սրբագրում են Ն. Շնորհալու «Առաւոտ լուսոյ»-ն դարձնելով քղխումն ի Հօրէ բղխեալ և յՈրդւոյ»: Հայոց եկեղեցու դաւանակի ամփոփումն երգւումէ եկեղեցում այսպէս՝ «ի հարաշարժաղբերէն անհատահոսդ վտակ՝ կենդանարար Սուրբ Հոգի»...<sup>5)</sup>:

Հինգերորդ վեցերորդ և եօթներորդ սխալները կամ թիւրիմացութիւնից են յառաջացած կամ թէ երկմիտ նախազասու-

1) Մատթ. ԺԸ, 18. Յովհ. Ի. 22:

2) Յաճախապատում Էջ. 163:

5) Առձեռն Շարսկան Ս. Էջմիածին 1861. Էջ 401:

թիւնք կասկածի տեղիք են տուել Հայոց: Միայն վերջինը կապ ունի բնութեան խնդրին հետ, որ ինչպէս յայտնի է, համաձայն չէ Հայոց և Հռովմէական եկեղեցեաց մէջ՝ Հայք ճանաչումն բնականարար մի բնութիւն յերկուց բնութեանց» իսկ նոքա «Երկու բնութիւն ի մի անձն Քրիստոս», (in duabus naturis): Այս նկատմամբ բազմաթիւ գրուածներ կան Հայոց մէջ՝ սկսեալ զ. և է. դարերից. միայն մի քանիսն են գոցանից հրատարակուած և այժմ հազուագիւտ:

կան քանի մի կէտեր ևս, որոնց մասին պէտք էր խօսել, սակայն առ այժմ գառնանք միւս խնդրին:

Ուուրինեանց քաղաքագիտութիւնը սերտ կապուած է եկեղեցականների հետ. այդ ժամանակ իշխանական ցեղերից էին մեծ մասմբ բարձրաստիճան եկեղեցականք, որոնք արքունական գործերն առաջ էին տանում ըստ որում և թագաւորները խիստ քաջալերում էին գոցա: Պատմիչները մեծ գովեստով են խօսում այդ թագաւորական անձանց նկատմամբ, մինչ այն որ Վահրամ վարդապետ Եղեսացին իւր մի ճառի մէջ որ գրել է Վան Գի օծման առթիւ, ասումէ «գթութիւն մարդասէր Հոգւոյն Աստուծոյ հանգիցէ ի հոգիս ննջեցելոցն մերոց, և յարուսցէ զնոսա կեանս... մանաւանդ զնախայիշատակեալ նախնիս մեր պատկառութիս, զնուրինեանսն, յորոց երանելին Զապել թագուհի, որոյ ողորմութեանն և առատ պարզեացն՝ որ առ Ուսումնականսն, պըտուղ է մերս նուաստութիւն, և ևս վեհագունից քան զիս»<sup>1)</sup>): Ամենաբարձր ուսումնականներն ևս նուիրուում էին այդ կոչման, վասն զի սիրելով իւրեանց ուսումը միայն այդ աստիճանի մէջ էին կարող ընդարձակ ասպարէղ ունենալ ժողովրդի համար գործելու կամ գրականութեամբ պարապելու: Այդ իշխանազուն եկեղեցականք ինքեանք իսկ համոզուած էին, որ իւրեանց գործըն էր՝ ոչ միայն ժողովուրդ կրթել, թագաւորասիրութիւն քարոզել այլ և նոյն իսկ թագաւորներին պահել աստուածային քաջալերել նոցա պատերազ-

1) «Արարատ» 1869. էջ 101.

մի մէջ, պահպանել նոցա գահն և տղն։ Այսպէս է առում և վահրամ այդ պաշտօնական ճառի մէջ։ «Խոկ եկեղեցական գառուց արժան է զաստուածային օրէնս ի ժամու և ի տարաժամու յունին թագաւորի լսեցուցանել անպատկու և անկառ ի սահման թագաւորական ուղղութեան զնա յորդորել։ Մի և նոյն ժամանակ և «զաշխարհ» ի նոցին ի հնազանդութիւն յորդորել ուսուցանել ծառայել մարմնաւոր տեառն որպէս Աստուծոյ, և զամենայն հարկ և զիրաւունս առանց տրանջման յարքունիս վճարել։ Ահա այսպիսի համոզմունք ունէին այդ ժամանակի վարդապետք, վասնորոյ և Վարդան՝ կաթուղիկոսի այդ թղթի մէջ գործ է ածում վճռական լեզու և յորդորումէ թագաւորին հաւատարիմ մնալ Հայաստանեայց եկեղեցուն։ Նոքա փառաբանումն բարձրացնում էն Առուբինեանց, «ի ցեղէ մեծին դաւթայ թագաւորի և Մարգարէին» էին համարում։ սակայն երբ այդ թագաւորք խառնուումէին եկեղեցական խնդիրների և ինքնագլուխ վարդապետ ուզում գառնալ՝ ըստ հաճոյից կարգեր փոխելու, աստուծայինն ենթարկելու մարդկային քմահանութեան, քննութիւններ անելու առանց առ այդ կողուած լինելու կամ եկեղեցական նախապատրաստութիւն ունենալու, այնտեղ արդէն Հայոց եկեղեցականք գիտէին «տալ զԱստուծոյն՝ Աստուծոյ» նոքա ելնումէին և յաւիտենականը պաշտպանում ժամանակաւորի դէմ։ Այդ հաստատութիւնն ունի Վարդան՝ քաջախրոխտ վարդապետն, որ կաթուղիկոսի բերանից բարբառումէ։ «մեք պատուիրեմք, որ ոչ թողուս զՃշմարտութիւնն, յօժարելոյ զկնի բազմաց ի կորուստ երթալ», ըստ որում համոզուած է որ թագաւորի շեզուիլն իւր նախնեաց շաւզից նորան անյոյս կանէ անկման լնթացքում։ Առուբինեանք զգոյշ էին քաղաքագիտութեան մէջ։ Նոքա օգտուումէին եկեղեցական հանգամանքներից՝ առանց դոցա վտանգի ենթարկելու։ Այդպէս արաւ Լեռն Մեծն, այդպէս արին և նորա յաջորդք. հեռուն զգնանք՝ վերցնենք հէնց Հեթումին և կտեսնենք որ նա ուրիշ պարագայից մէջ նոյնատեսակ էր վարւում։ Կոստանդին Ա.-ի 42-դ տարին (1262) ուղարկուեց Մխիթար Տաշխացին Աքքա Հռովմէական նուիրակին պատուով

ընդունելու. Միսիթար գնալով և վեճի բռնուելով՝ ջրումէ նուիրակի զաւանցական գաղափարները Հռովմէական եկեղեցու մասին: Հեթում պատուիրել էր 0շնին առնել նուիրակի սիրտը, սակայն երբ Միսիթար լիրագառումէ և իւր յաղթական բանակուիր պատմումը Հեթում հրամայումէ նորան «գրով տրձանացուցանել»: Միսիթար գրեց այդ և նուիրեց Հեթումին մի ուտանաւորով, որ է այս.

«Յնկալ զլնծայսդ իմ զսակաւ.  
Զոր ձեզ նուիրեմ արքայ Հեթում:  
Վեչ էր խնդիրն քո՝ քան զիս.  
Եւ իմաստնոյ գործ նա այլում;  
Զի գեղեցիկ գրէր՝ քան զիս.  
Ըստ արժանեաց տեսոյ մոաց քում.  
Լեր անարգամեծար առ իս.  
Եւ նմանեատ ասո տեառն քում:»

Այնպէս է վարում և կոստանդին կաթուղիկոսի այն նամակի նկատմամբ, նա յորդորումէ նորան «քաղցը և կալղագոյն առնել զպատասխանի թղթի պապուն», որով անհրաժեշտապէս տուած կինի մի հատուցում անմիտ ոլոչանջներին և յետ մրցած արժանապէս, իսկ միւս կողմից չի հարուածիլ իւր խաղաղ կամ նպաստաւոր յարաբերութիւնը Հռովմայ քաղաքական հերոսի հետ: Աակայն այդպիսի մի քաղաքագիտութիւն հեշտ չէր և ամենայն մարդի գործ չէր, եկեղեցական խնդիրների մէջ քաղաքական ներուղամութեամբ կամ երկմիտ գոյներով չէ կարելի պատասխան տալ. եկեղեցական խնդիրներում անհրաժեշտ է որոշութիւն և վճռականութիւն, առանց կէտ մի զիջանելու հաստատուածից: «Յարեսիրտ մարդիկ կարծումնն, առումէ ոռուաց մի բարձրաստիճան անձն առ կեօլնի հին կաթողիկաց ժողովը գրուած թղթի մէջ, թէ պէտք է կրօնական գործերում զիջանող լինել, չպէտք է իւր՝ թէե ճշմարիտ՝ սկզբունքները կամակորութեամբ և հետեւութեամբ յառաջ տանել. նոքա կարծումն թէ պէտք է գնել խաղաղութիւնը (թէե այդ փուտ էլ լինի)»

ամեն գնոլ և առաջարկում են բարեժամական (opportunistische): եղանակով գործելու, Բայց նոքա չեն հասկանում կրօնական ճշմարտութեան խակական բնոյթն. այդ ճշմարտութիւնը բացարձակ է, ուստի և չի կարող իրաւափոհութիւն տանել (kompromiss) անհրաժեշտների (գաւանանքների) մէջ: Ուղիղ է նկատում գիտնական Մեօհլէրը. թէ «եկեղեցին չի կարող կեղծ խաղաղութիւն կապել, որ միայն ճշմարտութեան վրայ կարէ հաստատուիլ»: Ոչ: բարեժամութիւնն հազիւ արժէք ունի քաղաքականութեան մէջ, իսկ կրօնում և ոչ երբէք, գիտող է ո. Բերնհարդի ասածը՝ «Melius est, ut scandalum oriatur, quam veritas relinquatur»<sup>1)</sup>. (լաւագոյն է գայթակղութիւն յառաջացնել, քան ճշմարտութիւնը թողնել):

Անչ և իյէ, այն որ ինչ այս Հեթումը պարզ հասկանում էր և յառաջ էր վարում քաջութեամբ, այդ գույխ բերելու հանճարը, չունեցաւ միւս Հեթումը. ոս կարծում էր թէ եկեղեցական հարցերի հետ կարելի էր այնպէս խաղալ ինչպէս կրօնաւորի ոքեմի հետ, որի տակ զինքն նոյնքան անբաղդ էր զգում, որչափ արքայական ոսկեգահի վրայ. այդպիսի մարդից ինչ կարելի էր սպասել: Բայց Հեթումը Բ. մեղաւոր չէր այնքան. և մի կողմից հող էր գտել իւր նախորդների քաղաքականութեան մէջ՝ եկեղեցական հանգամանքներից օգտուելու, միւս կողմից տեսնում էր՝ որ Բիւզանդի թուլամորթ կայսրներն եւս ջանում էին ամեն ինչ զոհել, միայն մի միութիւն հաստատելու համար իւրեանց և պառակտեալ չուովմայ միջն, յոյս ունենալով որ արեւմուտքից ապա օգնութիւն կգար և իւրեանց ընկնող բաղկի տեղը կը ոնէր: Մանուէլ Օ. (1143 – 1180) կայսրից սկսեալ՝ մինչև Բիւզանդական վերջին իշխողն ոչ մի պատերազմական նախապատրաստութեան չդիմեցին, բացի զբաղուելուց այդ ցնորսական և ազգակործան միութեամբ: Մանուէլ առանձնաշնորհումներ էր տալիս Լատիններին ի կ. Պոլիս, ընտածելով որ գորանով գրգռում էր Յունաց՝ այն իսկ իւր դէմ: Պապերը համեմատում էին Յունաց՝ կորած դահնեկանի,

1) *Sie* Der X. deutsche Altkatholiken-kongress. Köln 1891. Էջ XVI.

մոլորեալ ոչխարի, հոտած Ղազարոսին, և իբրև թէ ինքեանք Աստուծոյ որդի էին և մօտենում էին ազատելու։ Յոյներն եպերում էին դոցա, մինչդեռ կայսրների ինքնահաւանութիւնը չէր վիրաւորւում։ Միքայէլ Պալէօնգոս և Լիոնի 1274 ի ժողովը <sup>1)</sup> պարզ արտայայտութիւններ են կայսրների բարոյական անկման։ Միքայէլ ընդունեց այդտեղ Հռովմաց հաւատոյ խոստովանութիւնն և ստորագրեւումէ այդ եկեղեցու իշխանին։ Պապերն օգտուելով կայսեր թուլութիւնից սկսան խիստ վարուել Յունաց հետ և պահանջել փոփոխութիւնք մտցնել եկեղեցում, թէ և սկզբում խոստացել էին այդպիսի ստիպունքների չդիմել և թողնել եկեղեցին անփոփոխ։ Մարտին IV մինչև անգամ բանադրեց կայսեր իբրև «պաշտպանի հերձուածի և հերետիկոսութեան»։ Ժողովուրդն այնպէս գրգռուած էր, որ Անդրոնիկոս Բ. 1282 ին գահ բարձրանալով, մերժեց այդ միութիւնն և բոլոր եկեղեցինեղը ջրօրհնել տուաւ, սրբապղծութիւն էր համար միութեան պղծութիւնից։ Այնուհետեւ սրբապղծութիւն էր համարւում Լատինի ներկայութիւնը Յունաց եկեղեցում, ըստ որ նոքա այժմ ևս թոյլատրւում են միայն գաւթում կանգնելու։ Բայց այդ վերջ չտուաւ այդ կործանիչ գործին և 1439 ի Ֆլորենցի ժողովն <sup>2)</sup> ևս Յովհաննէս IV-ի գլուխն կապեց իւր նախորդ միարարների անարգանքը։ Այդ ձրգտումները դեռ շարունակուեցան, մինչև որ 1450 թուին Անտիքիայի, Երուսաղէմի և Աղէքսանդրիայի պատրիարքները ժողովելով ի Կ. Պոլիս, գահընկէց արին միութեան ձգտող պատրիարք Գրիգորիոս Մամմասին և տեղը հաստատեցին Աթանաս պատրիարքին, մինչև որ վերջապէս թիւրքերը մտան այդ «տիեզերական մայրաքաղաքը»։

Ճիշդ այս ուղղութեամք էր առաջնորդւում և մեր Հեթումն, որ

1) Այս մասին ընդարձակ պատմումէ Hefele, Konziliengeschichte VI էջ. 103. իսկ գործավարութիւնք—առ Մասսի XXIV, 37.

2) Hefele, անդ. էջ. 673. Այդ ժամանակի բանակցութիւնների մասին հրատարակուած է ի Մոսկվա 1847 մի ոռուերէն գրութիւն, որի հեղինակն է ոմն Գորսկի, սակայն առիթ չեմ ունեցել տեսնելու։

կարծումէր թէ արևմատքը պիտի փրկէր իւր երկիրը կորուսալից: Մինչև անգամ Բիւղանդ՝ որ խորխորատի զառիվայրի վրայ էր կանգնած, որի ոտի տակ փիսրուն հող էր և ոչ կարծր ժայռ, դարձել էր կարճատես Հեթումի աջքում յուսոյ տեղիք: Այս ինչ որ իւրն էր, դորան էր իւր ոյժը պատում և դորան ձեռք մխելով էր ուզում հաճոյանալ իւր թշնամի բարեկամին, որից իբրև թէ օդնութիւն պիտի ստանար, ինքն, իւր պետութիւնն, իւր եկեղեցին: Այսափ էր Հեթումի քաղաքագիտութիւնը, զի Բիւղանդ ևս նոյնն էր մնանալ, կարծելով թէ կիսաբէր պապին՝ որ իմաստութիւն ունէր օձին չտաքացնելու:

Հեթում Բ.-ի այդ չարաբաստիկ գործունէութիւնն, յորում խաղի է արւում նորա գահը նոյն իսկ իւր հպատակ ժողովրդի և անձնուէր եկեղեցականների առաջ, սկսուեցաւ 1292 թուին ծռազատկի պատճառով, երբ կաթուղիկոսական աթոռը թափուր էր, Հռոմիլան առնուած էր և Սիաը պիտի դառնար Հայոց Հայրապետի մեհանիստը՝ հեռու իւր բնախայրից, հեռու և իւր հաւատարիմ եկեղեցականներից՝ արկածների ենթարկուելու համար: Հեթում ինքն իսկ պատմումէ այդ իւր ոտանաւորի<sup>1)</sup> մէջ, ողբալով հանգերձ իւր մեղքերը: Չմանրամասնենք, դնենք այստեղ մի փոքրիկ նկարագրութիւն<sup>2)</sup>, որի հեղինակն անյայտ է, ծռազատկի ազմուկների պատճառով գրուած, թէև բռն ծռազատկին միայն քանի մի տող է նուիրուած: Գրողն ականատես եկեղեցական է և ինչպէս կտեսնէ ընթերցողը նոյն իսկ բովանդակութիւնից, հակառակող է եղած այդ եղելութեանց: Դորան կհետեւի և մի այլ նկարագրութիւն և ապա կշարունակենք մեր դիտողութիւնք:

Վասն մոլոր ման զտտին բանք.

Յայսմ ամի գրութեան տառիս. իգաւառիս Կիլիկէոյ, էր թուակունութեանս Հայոց ԶԻԱ (1292) և եկն եհաս ամն մոլորման, յորում գրեալ է թէ Յոյնք մոլորին. և մինչ ակնունէաք յայլա-

1) Տես «Արարատ» 1869 էջ. 39:

2) Մատենադարան Ս. Էջմիածնի. թիւ գրչ. 544.

սեռից կրել մաքառումն, ի տանէ բուսաւ թշուառութիւն, զի աղգս Հայոց պատառեալ ի միմեանց յերկուս բաժանեցան, յահոգուտ վիճումն բերելով. և ոչ կային մնային մինչ ի գալուստ կենարար չարչարանացն, յօրում վասն ստոգութեան զատկին մինի լրման լուսնին, այլ զի ի մերոց էր հակառակութիւն, զառաջաւորն արարին սկիզբն թիւրութեան, զայն ոչ ածելով զմուաւ, զի թէ ընդ այլոց աղջաց կամին միաբանել նոցա առաջաւոր ոչ գոյ, և թէ մերով կամիցին վարիլ սահմանաւ, դպրութիւն Հայոց զառաջաւորն յայտնի ցուցանէ: Այլ և ոչ զայն իմացան, որ թէպէտե բազում պատճառք գոն առաջաւորին, այլ առաւելն մեզ յայսէ հաստատած. թէ յորժամ ել սուրբն Գրիգոր ի Վիրապէն, և օր պահք կարգեցաց հարուածեալ ժողովրդոցն, և յամենայն ամի շըրջագայութեան պահէն ճգնութեամբ: Եւ էր ժամանակն, յորժամ այս կարգեցաւ, այլ վասն հաստատութեան փոխեալ եղեւ յառատածազգեցաց արանց և եղաւ ի ձմեռնային յեղանակն, զի հիմն լիցի հաստատութեան զատկին, զի անտարակոյս եղիցի ամենայն ումեք, յորժամ զհիմն հաստատ պահեսցին: Եւ զի յայսմ ամի ի կիւրակէ եկն յառաջաւորն, զոր պարտ էր ի միւս կիւրակէն անցուցանել ըստ գրեցելումն, ոչ անցուցին, այլ ի նոյն արարին և պահք քարոզեցին. և զոչ հնազանգեալսն պատուհասակոծ առնէին: Եւ արդ եթէ Յոյնք ուղիղ են, նոքա ուտեն և ոչ զատազարտէ, վասն որոյ և զմեզ յուտելն ոչ էր պարտ տանջել: Նա և զայն պարտ էր ածել զմուաւ, թէ յորժամ յայսմ ամի զառաջաւորն՝ որ ի կիւրակէ եկն՝ ի միւսն ոչ անցուցին. յայլ ամսն որքան ի կիւրակէ գայ առաջաւորն, թէ ոչ անցուցանեն յառաջիկայ կիւրակէն, զատիկն մեր ծուռ գայ՝ որիշ յայլոց աղգացն, զամենայն ամսն զայնոսիկ որչափ ի կիւրակէ հանդիպի, և թէ զայլոն փոխեն և զայս մինս ոչ՝ անիրաւութիւն է. զի գրոց սահման զայս ոչ գիտէ: Եւ զի լրումն զատկին ի կիւրակէ էր, բազում հնարիւք ջանային յետո նհանջել ոչ յիշելով թէ առաջաւորին պատկեր աւուրն զաւագ լրումն ցուցանէ. զոր թէ թիւրել կամէին՝ նախ զհիմն պարտ էր խորել: Եւ թէ գրեալ էր՝ յայսմ ամի Հայք մոլորին, յիրաւի էր մեզ ժողովս առնել և հնա-

Եթու հայթայթել։ Ապա թէ զՅոյնս ասէ մարոբեալ զՀայք ընդէ՞ր էր պարտ մերացս ամբոխել։ Բայց քանզի օրէնողիր արտարինք էին եկեղեցւոյ՝ և ոչ ներքինք, բունութեամբ զկամս իւրեանց կացուցանէին. և առաջնորդք զմիտու կամեցան հաճել զ՛րամանատուաց. սպառնային ընդ բանիւ առնել զոչ հնագանգեալսն. զոմանց զկարգը լուծին զեկեղեցականաց. և զոմանս ահացուցանէին։ Վասն որոյ յաղագս կրկնակի սպառնալեաց ի գաւառիս յայսմիկ բազումք զարհուրեալք յանձն առին զխոսորումն. ոմանք տգիտաբար, և կէսք վասն սպառնալեաց։ Բայց գրեթէ խղճիւ ունէին զմիւրն. կամք ամենեցուն յուղիվն փութայր. վասն որոյ տրաընջէին և նախատէին զրոնադատողն։

Յոլովիք թաքնաբար ունէին զճշմարտութիւնն. և սակաւք այնոքի որք յայտնի և համարձակ կարացին խոստովանել։ Վասն որոյ ձաղանս և եպերանս բազումն կրէին իսիրելեաց և ի բարեկամաց. իրք զապուշտ և զանմիտս. զի էին որք թելաղիր լինէին թաքուն ունել զճշմարտութիւնն. և յայտնի ոչ խոստովանել։ Եւ էր յայտմ վայրի տեսանել զոմանս խըզմատանջ եղեալ. զի ոչ կարէին մատնել զճշմարտութիւնն։ Վասն որոյ հաշէին և հառաջէին աւազելով զբերումն ժամանակին սագտանելով զպատահումն ինքեանց այնր գիպուածոյ. տարակուսէին վասն ելից իրացն, և վասիագէին յայտնի հալածչաց օտարաց, քան թէ այնպիսեացն մերոց, որք ստութեան իրք ճշմարտութեան ջատագով լինէին դիմադրութեան հանդիպեալ վշտանալով։ Եւ արդ նախ քան զամենայն զայս պարտ էր խորչել, եթէ քրիստոնէական հաւատ ի կամքն է և ոչ բլունութեամբ, զի Տէրն բանիւ հրամայեաց քարոզել, և ոչ թէ հարկաւ բռնադատել որպէս և յաւետարանին վերտածայնէ. ձեզ տսեմ որ լսէքդ. զի թէ բռնադատել պարտ էր ի ճշմարտութեան հաւատ, Տէրն զգումոր թագաւորի էր ընտրեալ ի մայրութիւն իւր. և յաշակերտութիւն զմեծագոյն իշխանս կոչել որք որով և ըրունութեամբ էին զաշխարհս ի հաւատ ածել ակամայ. որպէս կռապաշտ թագաւորք սաստիւ հրամայէին տանջել որք ոչ զոհէին. այլ զի ակամայ հաւատոյ մարդ գարձ ոչ սունու. վասն որոյ Տէրն ի կամսն ապաստան արար, և նազաստ լինել ուսուցանելով միայն է

պարտ, այլ ոչ բռնութեամք։ Եւ դարձեալ թէ վասն սիրոյ և միաբնութեան ընդ այլոց ազգաց զայս առնէին, պարտ էր տեսանել մտաւոր աջօք, թէ խաղաղութիւն էր մեծ թէ թշուառութիւն, ընդ այլոց ազգաց ջանալ սէր կապել և զազգս մեր բազում խոռվութեամք վրդովիլ։ Նաև յառաջ ստուար վիմօք հիմն հաստատել պարտ էր և ապա մանրագոյն քարամքը շինուած կատարել զի այն որ ասէր՝ թէ Յոյնք հին են (?) ի հաւատս և չումայ եկեղեցին մեծ է, նոցա զատիկն ճշմարիո է և մերս սուտ. իմանալ պարտ էր թէ եկեղեցի մի է յաշխարհի և մի եկեղեցին մեծ և փոքր ոչ կարէ լինել, որպէս մի կենդանին ինքն ինքեան մեծ կամ փոքր ոչ կարէ հանդիպիլ։ Եւ եթէ զմարմնական փառմն մեծ ասեցին, ապա ի մերում ժամանակիս քան զազգս նետողաց մեծ ոչ գոյ. և թէ քարամքը բարձրաբերձ շինուածքն մեծ ասեն, նա յոլով եկեղեցիք յարեելք մեծամեծ տեսանին։ Եւ է՞ր է՝ որ ի զատիկն իրաւ համարիմք զՅոյնք զՀոռովմայեցիսն, գնալով ընդ նոսաւ և ի ծնունդն և ի խմորն և ի ջուրն և յերկու ընութիւն տաելն՝ սուտ առնելով ի բաց կամք. նախ զմեծն պարտ էր հաստատել և փոքրագոյնքն դիւրաւ գային զկնի։

Այլ և ազգիս Հայոց քահանապետութեան և թագաւորութեան զօրինագրութիւն նախ պարտ էր յԱշտիշատ Տարօնու հաստատել և ի Վաղարշապատ, յԵկեղեց գաւառ և ի Գարանաղեաց, որք աւելի ունին քանզիեց հարիւր գաւազան կարգեալ և ապա մասնաւորս Կիւլիկէ յանդամնն յօդէր. և թէ անփոյթ առնեն զարեելից, ապա ո՞ւմ կոչին քահանայապետ կամ թագաւոր. այլոց ազգաց տիրել ոչ կարեն, և Կիւլիկէ գրեթէ բազում ազգօք լրանայ, և ուր կառուսցեն զկամն կամակորս։ Եւ տէր Ներսէս և Եղբայր նորին հանապազ արեելեօք են պարծեալ առ Յոյնս, որպէս գրեալ կայ ի թուխթմն ինքեանց, զի որ բազում ունի զբնդ ձեռամք անկեալսն, մեծ կոչեսցի տէրութիւն, և որ սակաւ՝ փոքրկութեամքն արհամարհեսցի յամենեցունց։

Սուրբն Ներսէս շառաւիղն լուսաւորչին մերոյ, գրեալ է ի մարգարէական բանս իւր, թէ փի վերջին ժամանակս թագաւորք

Յունաց պատերազմաց ոչ հոգացեն, այլ ի հաւատոյ քննու. թիւն սպառապեսցին. և զայս տեսաք ի մերումն ժամանակի, մերոց զնոյն առնել:

Եւ գիտել պարտ էր, եթէ թագաւոր յաղագս ընդ ձեռամբ անկելոցն զատի ի տեառնէ, յորժամ յարտաքին թշնամեաց ոչ պահեսցէ. իսկ դհաւատոյ բանն եկեղեցոյ գլուխն հոգասցէ: Եւ արդ զի՞նչ օգտւո է զմժղուկո քամել և զուլտս կլանել. զոր՝ յայլաղդ քրիստոնէքն մեծագոյն բարխ տեսանել, անփոյթ առնել, և փոքր հեշտութեանց հետեւել: Եկեղեցւոյ պայծառութիւնքն սահմանեալ և եկեղեցի կամ եկեղեցականութիւն ոչ տեսանի, քահանայագործութեան խնդիր ոչ լինի, մոլորումն ժողովրդոց ոչ հոգասցի, և զի՞նչ օգտեսցեն մասնաւոր պայծառութիւնքն: Քահանայապետ, զոր ոչ բարեպաշտ գիտէ և ոչ յոռի, վաղվաղակի աստուածաբան ձեռնադրէ, և զիմննեանն պարտ է լուել և ոչ յիշել, որք վաճառեն զշնորհն, որոց բեկումն ժողովրդեանն ոչ ցաւէ և ոչ վասն խրատու հոգք լիցի: Վարդապետութիւն միայն ի տարեկանս լինի և յարքունիս և ռամիկք ընաւ զրկեալք ի միսիթարութենէ գրոց սրբոց: Քահանայք երեք և չորք ի միում գեղջ և գոնէ զերգս երից մանկանցն ոչ գիտեն. բայց տօնէ կամ ի զատկէ պատարագի հոգ ոչ լինի. յաւուր կիւրակէի քահանայ յեկեղեցոյ գուռն ոչ տեսանի, աւետարան ոչ ընթերցցի. եկեղեցի սարդիստամքը լցեալ, զգեստք փոշոտեալք, կամ ցեցակերեալ, կամ ընաւ անզարդեալ, հաղորդութիւն խորհրդոյն բորբսնեալ կամ ի մկանց ծախեցեալ. քահանայք և առաջնորդք գայթագեցուցանեն և ոչ շինեն դհաւատու:

Օրինագրեաց Աստուած մարգարէիւն՝ պատուել զօր շաբաթուն, զի ժողովեսցին ի ժողովրդանոցսն. և ընթեռնուին քահանայքն զօրէնս և զմարդարէսն, և աղօթից և վերծանութեան պարապեսցին: Իսկ մերս քահանայք յաւուր կիւրակէի ոչ միայն թէ աւետարան ոչ ընթեռնուն ժողովրդեանն կամ զպատարագն խափանեն, այլ ընաւ անփոյթ առնեն զմեղուցելովքն և յաւուրս կիւրակէի քահանայ առաջնորդէ ժողովրդեանն ոչ յարդարութիւն և ի դրանս եկեղեցւոյ սրբոյ, այլ ի վաճառարանս և

ի փողոցս ի կատակերգութիւնս և յարբեցութիւնս, ի թառերս և ի խաղս զօր մանաւանդ բարիոք էր յաւուրս միաշաբաթու դործել իւրաքանչիւր ումեք զգործ իւր լուութեամբ, քան թէ այնպէս պարապումն առնել ի չարիս և զաւուրս որբութեանց մեղօք վճարել, և զչարկ վաճառայն յերեք շաբաթոջ սահմանել զի գոնէ յաւուրս միաշաբաթոջ յեկեղեցիս դիմեսցեն, թերեւս սպատարագ մատուսցի, կամ աւետարանական հրամանքն ընթերց-ցի և բանաւոր հաւատքն զգաստասցին, ի զղջումն եկեսցեն և ի յօյո հաստատին և ծանօթասցին կարգաց և կրօնից քրիստո-նէութեան: Այլ ժողովրդականքն զայս ոչ գիտեն և ի քահանա-ցիցն ոչ գաստիարակին, վասնորոյ անտերունջք շրջին, զի քա-հանան եղեւ իբրև զմի ի ժողովրդենէն, մանաւանդ թէ առաւելու ի չարիս, և ի նոյն բանայ ճանապարհ, բազմաց տալով համար-ձակութիւն: Եւ այս ընդէ՞ր, զի ահ և երկիւղ յառաջնորդաց ոչ ունին, վասն զի և նոքա ի թիւրն ընթանան. իսկ ժողովրդա-կանքն ամալիք, թափառականք, կորդացեալք մոօք, մոլորեալք ի գիտութենէ, զիսոստովանութիւն ոչ գիտեն, զի ոչ են խրա-տեալ, յեկեղեցի ոչ դիմեն, զի ոչ են ծանօթասցեալ. զաղօթս և զարասուս ոչ ճանաչեն, վասն զի ոչ են վարժեալ. ի պա-տարագ ոչ փափագին, զի ոչ են ուսեալ: Կուայ յումեմնէ զի պա-տամէք զմարդոյ՝ վկայեալ ի հարազատ եղօրէ իւրմէ, զի հըն-գետասանամեայ գոլով և գեռ զպատարագն չէր տեսեալ յեկե-ղեցւոջ. և զայլ ումեմն, թէ տասն ամ աւելի էր որ մարմնոյ և արեան Տեառն չէր հազորդեալ: Աւաղ թշուառութեանս. ով ոչ ողբասցէ զմեզ վասն այսպիսի չարեաց. կամ որպիսի գեհեն ոչ ընկալցի զմեզ, վասն այսր յանցանաց: Զայս պարտ էր հոգալ, զայսպիսի վէրս բժշկել զայսպիսի ախտս առողջացուցանել, զայսպիսի ցաւս փարատել այսոքիւք նախանձել ընդ այլ քրիս-տոնեայսն, որք հլուք և հնազանդ են պատուիրանացն տեառն, երագ ի խոստովանութիւն, ջերմ յապաշխարութիւն, յորդոր յունինդրութիւն. զի թէ զայսոսիկ ունէաք, թէ և յայլ իրս թե-րի գտանէաք, ոչ ինչ գոյր վնաս. և որովհետեւ զայս ոչ ունիմք, թէ և արեգական նման վայլեցուցանէ ոք զարտաքին սովորու-

թիւն, ընդունայն է և ի զուգ է: Զի զորօրինակ թէ ումեք յուղից մինչև ցգլուխ ախտիք ի զանազան վիրաց լցեալ իցէ մարմինն, և նա զներ գլխոյն փաստակալօք պճնիցէ, ունայն և ընդվայր է, և ծաղր լինիցի տեսողաց, այսպիսի իմն է և մերս այժմուս ոմանց նորաձեռթիւն, որք հակառակութեամբ ջանան զիւրեանցն կացուցանել զկամս. զի ի նուազեալ ժամանակիս և ի վերջ եկեալ աւուրցո պարտ էր զազտոյ վէրն բժշկել և զայնուիկ հաստատել բարիս, որ զկնի մահու զնետ գայր ստացողին և անտի կենացն բերէր օգուտ և ոչ զայնս որ տոտեն մնան յաշխարհի և ոչ վնասեն ի կատարածի: Երբեմն հարկ եղին բամցելացիք Ասորւոյ ի քաղաքի միոց, կամ զուսումն թողուլ ամենեցուն, կամ զժամ հարկանելն, և յանձն առին զուսումն թողուլ և զժամ հարկանելն ոչ թողուլ. և յորժամ պատմեցին մոլար առաջնորդին իւրեանց Խոմայէլացիքն, առէ ցնոսա, թէ երբ զուսումն թողուն և զհաւատն ևս թողուն:

Եւ բաղկուրար արկանելոյ, ո՞ր հարկ սոխալէ զքահանայն զի պարտէ զի ընկղմեսցի նուաստն ի մեծէն. և անպիտան է լոյս ճրագին առ արեգակամք. և թէ ոչ՝ միով ուսով և զսարկաւագին. պարտ է արկանել քահանային զուրար, նաև ո՞ր սուրհանդակ զինուորի զգեստիւ ձեւանայ. կամ ո՞ր զօրագլուխ թագաւորի: Այլ և աւզանին խարումն ընդէր. թէ ի միում տեղւոց և ի պարսպին կառուցեալ կայ յեկեղեցւոց, թէ վասն հաստատութեան և թէ վասն պարկեշտութեան կամ աղքատութեան. զի շնորհքն միապէս ներգործէ յամենայն տեղի. և չոգին զգործոյ կամի ընտրութիւն: Այսպէս և որ արծաթի սիրհ ոչ ունի, ոչ վերջացի յընդունելութենէ շնորհաց, թէ բանիւ և գործով սրբեալ է որպէս զարծաթ. զի Աստուած նիւթի ոչ է ի ինդիր, այլ թէ երկուն լինէր բարի էր. այլ այս ամենայն տղաբարոիցն է, որ միայն ի զգալիսն են կապեալ սիրով, և խմանալոյն հոգն ոչ ունիցին: Եւ այսոցիկ օրինադիրքն, ո՞վ կամ ուստի, իշխանք և զօրականք, գասք զինուորաց և այնոքիկ որ և ոչ մտից եկեղեցյն գոն արժանի. որք զհոգս իւրեանց ի բաց ընկեցեալ, եկեղեցեաւն ջանան պերճանալ, զի յիւրեանցն ամօթալի են վասն

Հեղգութեան. ծածկոյթ և պատրուակ առնեն զայս եպերանաց, զի պարապ ոչ կարեն կալ, և գործոց ոչ են բաւական. և զի զողի այն ոչ կրեն, յանհոգս են, իբր թէ անպարտ վճարին, որոց ըստ գործոց՝ և հաւանեալքն կամաց նոցա յաւետ կատարիչք՝ քան թէ Աստուծոյ. զհրամանս իշխանաց ի պատիւ ունիցին, քան թէ զօրինացն. վասնորոյ աչն ձախ լինի, և վերինն ներքին. յետին առաջին, և ստութիւն ճշմարտութիւն, և ճրշմարտութիւնն ստութիւն:

Ահա բարւոք պահապանք ոչ կարգեալք, այլ ինքնաձեռնեալք, որոց հնազանդեալքն ի կորուստ և յապականութիւն վարատեալք, վասն ոչ ունելոյ զգաստիարակութիւն։ Այլ թէ իջանէր իւղն ի մորուսն Ահարոնի, և ի գրեպան զգեստուն տիրապէս տարածէր։ Բայց քանզի ոյս ոչ լինի՝ վերոյգրեալք յառաջեսցին. և ի վերայ այսր ամենայնի, թէ զանձնիշխանական պարգևսն, զոր Աստուած շնորհեաց մարգկային բնութեանա ոչ ոք յափշտակէր, բարիոք լինէր։ Հին սովորութիւնն կարգեալ օրէնք է և արտաքոյ կամաց շարժել գառնութիւն և աղաղակ գործէ, վասնորոյ որ իմաստունքն են, ամոքելով քարշեն ի գիտութիւն ճշմարտութեան, և ոչ խոցելով. անասունք զնոյն սիրեն. և ի ճշմարտութիւն ամենայն ոք դիմեսցէ, և լոյսն ամենեցուն լիցի վափագելի. և տուն Դաւթի աճէ, և թէ Աաւուզի ոք գտանիցի, նուազէ. զի որ յԱստուծոյ է, խորհուրդ կամ գործ ոչ քակտեսցի. իսկ հակառակն անհետ կորուստ եղիցի։ Եւ արդ այժմ օձ և ի (820) ամ է ազգ մի բաժանեալ և բազում հակառակութիւն ի մէջ անգեալ, երբեմն միաբանեալ և գարձեալ որոշեալ. և յետին հակառակութիւն քան զառաջինն դառն գտեալ. որպէս լինիցի այժմ գիւրաւ միաբանութիւն. և այն բոնութեամք և առանց կամաց. ի յազգ մի՝ որ սարտուցեալ են և խորշին և մեծ վնաս՝ միաբանութիւն կարծի։ Աղբայր սրբոյն Մաշտոցի Տէր Յովանէս կաթուղիկոսն Հայոց գրեալ է ի պատմագրութեան իւրում, եթէ թագաւորն Յունաց մեծաւ պատուալ առաքեաց ի Հայք և վափագանօք կոչեաց առ ինքն զկաթուղիկոսն ի տեսութիւն և ոչ կամեցաւ գնալ, ասելով պատճառ զայս ինչ. թէ մի գոյ-

թագվեցուսցէ զազգ իւր, կարծիս տալով ի գնալն՝ քաղկեդոնիկ եղեալ. ոչ գնաց: Եւ ի Գրիգորի կաժուղիկոսին թխտերն որ ի Հոռոմկայն էր, գրած է այսպէս. թէ Յոյնք առաքեցին և խընդրեցին, զայն ամենայն ներենք քեզ, միայն զայս մինս արարէք, զի երկու բնութիւն ասէք, և միաբանեմք սիրով: և հրաժարեցին և յանձն ոչ առին: Եւ արդ՝ ուր այսչափ կասկած թիւրութեան և հակառականաց գոն, առանց սիրոյ և յօժարական կամաց. ամենեցուն զիարդ լինի առ իրեարս հաճելութիւն: Նա և ոչ այլ ազգք ամենեքեան միաբանին, այլ ի զանազան իրս խորշին ի միմեանց, որով ոչ գոյ հնար ձայնակցութեան և ես թէպէտ և ոչ եմ մարգարէ, բայց զայս ասեմ թէ՝ առանց աղօթիւք խնդրելոյ և ամենեցուն յօժարական կամաց, առաջարկութիւնս այս արմատանալ ոչ կամի՝ թէ և բազում ամ կայցէ հակառակութիւն: Վասնորոյ պարտ էր ի բաց թողուլ զանօգուտ խնդիր և պիտանացուին ջատագով լինել, զողբոց արժանի աղէտո հոգալ և զիսրխայթեալ վէրս բժշկել յիւրաքանչիւր վտանգից:

Վուայ վասն ումեմն ի հաւատացելոց, որոյ ալիքն սպիտակացեալ և տեսողաց յոյժ պատկառելի, զի անամօթաբար զստոյգն պատմէր, որ յայնչափ ծերութիւն հասեալ, և յումեքէ ոչ ի բատեալ կամ տեղեկացեալ, թէ յիշոցն մեզս համարեալ է, կամ արժան է խոսառվանութեան: Այլ ոմն զպոռնկութիւն թեթև համարի, միւսն ի զրկելն և յանիրաւելն պարծի. ոմն վաշխից և տոկոսաց հետեւի, ագահութեան և արծաթսիրութեան, ցանկութեան և վաւաշոտութեան, սուտերդման և երգմնահարութեան, նախանձու և ատելութեան, մատնութեան և զրպարտութեան, գայթագութեան և կեղծաւորութեան, գողութեան և ուրացութեան, պղծութեան և զազրագործութեան և այլոց բազմաց որոց ոչ գոյ թիւ: Եւ զիշխանաց և զգործակալաց զի՞նչ պարտ է ասել, որոց մեծամեծ են սխալանք և զանխուլ ի յարքունուսո, որոց թէ տեղեկութիւն առ արքայ լինէր, ոչ մի մահու, այլ բազմաց էին արժանի, կաշառակերութեամբ թիւրեալ զգատաստան: Այլ և կանացին ի բաց թողցի յիշատակ, որոց բազումէ խարդախութիւնն ոճրագործութեան և զանազան ունելով մուտ ի

մեղս: Եւ ի վերայ ամենայնի և առաւել քան զամենեսեան, զի առանց ամօթոյ և լրբութեամբ է իւրաքանչիւր ոք յախտո անձին, որ մեծագոյն ողբոց արժանի է, քան զգործոց յանցանաց, զի ի մարդկանէ ոչ գատին և երկիւղն Աստուծոյ լիք ի մոխ վասնորոյ իւրաքանչիւր ոք դհանոյս անձին իւրոյ գործէ համարձակ: Ահա տեղի բժշկութեան, ահա իրք հոգալոյ արժանի, ահա գործ քննելոյ և դատողութեան, զայտիսի պակասութիւն պարտ է պատշաճել. զայտիսի թերութիւն լնուլ. զնոյն նորոգել. այսոցիկ հոգք յանձին ունել. այսոքիւք՝ ազգաց նմանել, որով լինէր ամենայն ինչ վայելուզ մեր և գեղեցիկ, վարձոց արժանի և ոչ անպառուզ: Հռոմայեցիք սահման ստուգապէս ունին, յամենայն երկշաբաթոջ քարոզ առնել ժողովրդեանն, և առանց պատարագ տեսանելոյ ի գործ ոչ գնալ, և ոչ ճաշակել, ամենայն աւուր ընծայաբեր լինել յեկեղեցի, ի խոստովանութիւն երագեն, ժիր յաղօթո, ջերմ յարտասուս, փոյթ յոզորմածութիւն և յօտարսիրութիւն, օրինաց հնագանգ, եկեղեցոյ ծառայք, եկեղեցականաց գերիք, զեկեղեցի ընդ հարկաւ ոչ առնեն, յարհամարհանս ոչ տան, իսկ մերք միայն ձկնակերութեամբ նախանձաւոր լինին: Կուայ վասն ումեմն Հռոմայեցոյ, զի նախատէր զհայ ոմն յաւուր պահոց վասն ձկնակերութեան, և նա ընդդիմագրեալ թէ՝ և գու զի՞ ճաշակես. ասէ հռոմայեցին, ես հրամանաւ ճաշակեմ վասն որոյ անդատապարտ եմ: իսկ գու առանց հրամանի լրբիս և դատապարտիս: Եւ զայն ուր դիցուք զշայոց՝ որ քան զամենայն մեծագոյն է չարիս. զեկեղեցի զոր Քրիստոս արեամբ իւրով ազատեաց, ի գերութենէ վարեն, զըստեր բաժին տալ և վաճառել ի քաղաքի աղաղակել Առւրբ Հոգին յեօթն հարիւր դրամ: վայ, վայ, վայ. զիարդ ոչ շարժեսցի անգունդք. իւր ոչ սասանին հաստատութիւնք, զայս յորսց ազգաց ուսաք. այսոքիւք ում նախանձաւոր եղաք, վասն այսոցիք զով ունիմք ջատագով:

Ահա զայս ամենայն եռես անձն իմ և լուաւ ունկն իմ և ի գրի արձանացուցի, այլ առաջիկայն Աստուծոյ յանձն եղիցի: Եւ ներողին մեզ յամենայնի վառք և պատիւ և միշտ անլուելի ամէն:

Եւ արդ յայտմ ամի, որ է թուականութեանս Հայոց Զիվ (1292) բանքս այս փոխեալ եղեւ յառաջին գրոցն յօրում գրեցաւ, և ասոտ երկրորդեցաւ ըստ պատշաճի պիտոյից. զի զինի եղելոցն յայտնի լիցի ստուգիւ։ Եւ զի փոխեալ էր ոմն զատ յառաջագոյն և պահեալ ի Խզազայն, և մատոյց առիս, և շնորհօքն Աստուծոյ ի բազում կտակս փոխեցաւ յայտմ ամի. բազում յաւելուածօք և արգասիւք, աճեցեալ ի վառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և նկուն եղեւ ստանայ։ Եւ արդ վասն զի անձնիշիան է մարդ, և իւրաքանչիւր ոք ի կամս իւր հաճեցիւ, և որը թիւրեսցին յուղղոյն ինքեանք ծանիցին։ Զի թէ գովիելի է գործն զոր առնեն, ապա մեք պատուոյ և մեծարանաց եղաք արժանի. զի զգովութիւնս ինքեանց արժանացուցաք. և եղաք նոցին ազաթանգեղոս և գրեցաք զգործո նոցա։ Իսկ թէ նախտանաց արժանի է՝ զոր գործեն, ընդէ՞ր յամառին և զստութիւն իրըև զծշմարտութիւն իրաւացուցանեն։ Այլ նոքա զիւրեանցն գրեսցեն. իսկ մեք ի բանս սրբոցն յեցեալ, և որչափ կար իցէ՝ յաւելցուք ի սոյն շնորհօքն Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս ամեն։

(Վարունակելի):

Ա. ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ